


2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ին Բանկը հետևողականորեն և հաջողությամբ իրականացրել է այն նպատակներն ու խնդիրները, որոնք նախանշվել էին: Բանկը ՀՀ բանկային համակարգում դիրքավորված է և գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ զարգացման գերակա ուղղություն դիտարկելով մանրածախ բանկային ծառայությունների զարգացումը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Բանկի կողմից հետևողականորեն և հաջողությամբ իրականացված թե բիզնես գործընթացային փոփոխությունները, և թե պրոդուկտների և ծառայությունների համար նախատեսված գործիքակազմի արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն արտացոլվել է Բանկի ֆինանսական ցուցանիշներում՝ ապահովելով նաև որոշ մանրածախ բանկային ծառայությունների գծով բացարձակ առաջատար դիրքեր:

Անդրադառնալով բանկերի հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2019 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների կայուն աճ: Մասնավորապես,


- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 45 մլրդ դրամով կամ 15.8%-ով և կազմել 326 մլրդ դրամ:




✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է 231 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 30.4 մլրդ դրամով (15%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 70%-ը, որից,

2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Անհատական վարկային պորտֆելը աճել է 21.5 մլրդ դրամով(24.1%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է 8.9 մլրդ դրամով(8.0%-ով)




• Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 39 մլրդ դրամով կամ 16.2%-ով և կազմել 281.4 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:



2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածը ավելացել է 35 մլրդ դրամով (18.7%-ով) և կազմել ընդհանուր պարտավորությունների 79%-ը:




✓ Բանկը 2019 թվականի ընթացքում թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց՝


- 15,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 150,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.55% և 5.25% եկամտաբերությամբ, 36 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
- 2,000,000,000 ՀՀ դրամով ընդհանուր արժեքով 20,000 հատ, 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9.75% և 9.5% եկամտաբերությամբ, 36 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

• Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 5.2 մլրդ դրամով կամ 13.3%-ով և կազմել 44 մլրդ դրամ:

2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Վճարային քարտերի քանակը կազմել է 234,030 հատ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 3.7%-ով:




- 2019թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծություները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում :


2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Տարվա զուտ շահույթը կազմել է մոտ 5.5 մլրդ դրամ: Աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 11.4%:




- Գործառնական շահույթը կազմել է մոտ 8.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.0 մլրդ դրամով կամ 14.1%-ով:




- Տոկոսային եկամուտները կազմել են 24.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.1%-ով:
- Տոկոսային ծախսերը կազմել են 11.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.6%-ով:

2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Զուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 13 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 12.8%-ով:
- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 6.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 656 մլն դրամով կամ 11.8%-ով:
- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 11 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.1 մլրդ դրամով կամ 11.3%-ով:



- Զուտ ոչ տոկոսային եկամուտը կազմել է -4.8 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր -4.3 մլրդ դրամ:

2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Չուտ մասհանումները կազմել են մոտ 1.2 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր 948 մլն դրամ:
- Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 55.0%՝ նախորդ տարվա 55.7% ցուցանիշի դիմաց:

Տարածքային քաղաքականության զարգացման առումով 2019 թվականին գործարկվեց Բանկի Արշակունյաց մասնաճյուղը: 2019 թվականի ընթացքում Կենտրոնական մասնաճյուղի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են և մասնաճյուղը սահմանված կարգով տեղափոխվել է իր գործունեության հիմնական տարածք, իսկ Սայաթ-Նովա և Արարատյան մասնաճյուղերը սեղմ ժամկետներում վերանորոգվել են 2020 թվականի հունվար ամսին:

Տարածքային քաղաքականությանը զուգահեռ Բանկում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ՝ ուղղված տեխնիկական և ծրագրային հագեցվածությանը, ծրագրային հսկողական մեխանիզմների ներդրմանը, այդ թվում՝

- Էական փոփոխություններ են կատարվել Բանկի ԻնտերնետԲանկ ծառայության տրամադրման գործընթացներում, ինչի արդյունքում ծառայությունը հաճախորդին հասանելի է դառնում անմիջապես՝ Բանկին դիմելուց հետո: Ներդրվել է նաև Բանկի հաճախորդներին այլ պրոդուկտների վաճառքի ժամանակ զուգահեռաբար նշված ծառայությունը տրամադրելու հնարավորությունը՝ առանց լրացուցիչ թղթաբանության:
- Ավարտին է հասցվել նոր՝ Converse Mobile ծառայությունը՝ ավելի ընդգրկուն հնարավորություններով: Converse Mobile թարմացված հավելվածը հաճախորդներին հնարավորություն է տալիս աշխարհի ցանկացած վայրից, օրվա ցանկացած ժամի կառավարել հաշիվները՝ App Store-ից կամ Play Market-ից ներբեռնելով համապատասխան հավելվածը:
- Առցանց վարկավորման ծրագրի մոնիտորինգի ընթացքում ստացված տվյալների հիման վրա կատարվել է սքրինինգի երեք կատարելագործում:

Մշակվել է առցանց վարկերի ծրագրային հաջորդ տարբերակը, որը նախատեսված է Բանկի պոտենցիալ հաճախորդների համար, այն նախատեսվում է գործարկել առաջիկայում թեստավորման աշխատանքներից հետո:

2019թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Ռիսկերի կառավարումը

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է "Ռիսկի կառավարում" թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է՝ Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Խորհրդի նախագահ՝



Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամ՝



Արսեն Գամաղեյան